ԿԱՐԾԻՔ

Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի՝ «Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում» թեմայով ԺԲ.00.02 («Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում») մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի՝ «Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության թեման արդիական է, այն նվիրված է վարչարարության համաչափության սկզբունքի համընդգրկուն ուսումնասիրությանը, դրա պատշաճ և միասնական ընկալման համար կարևոր մոտեցումների ձևավորմանը: Ընդ որում, հեղինակին հաջողվել է հետազոտության համար բարձրացնել թեմային առնչվող առավել արդիական հարցադրումները:

Ատենախոսությունում հիմնավորված կերպով ներկայացված են թեմային անմիջականորեն առնչվող առանձին հարցադրումների արդիականության վերաբերյալ փաստարկներ: Մասնավորապես, ինչպես ընդգծել է հեղինակը, վարչարարության համաչափության սկզբունքի տեսական և իրավական հիմքերի, չափանիշների և գիտագործնական մի շարք այլ հարցադրումների առնչությամբ օրենսդրական չափանիշների և դիրքորոշումների բացակայության համատեքստում դեռևս նկատվում է համալիր հետազոտություն իրականացնելու կարիք: Թե՛ գործնականում և թե՛ տեսական հարթությամբ վարչարարության համաչափության սկզբունքը դեռևս պատշաճ ու միատեսակ ընկալում չունի՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ: Ինչպես իրավացիորեն նկատել է հեղինակը՝ առանձին հարցերի կտրվածքով չկան միասնական մոտեցումներ նաև արտասահմանյան իրավագետների

շրջանում, իսկ ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերում դեռևս անդրադարձ չի արվել համաչափության սկզբունքի այն բաղադրիչներին, որոնք տեսագործնական տեսանկյունից խնդրահարույց են ոչ միայն հայրենական իրավական համակարգում:

Հեղինակին հաջողվել է գիտական ընդունելի մակարդակով, տեսական և պրակտիկ հարուստ նյութի օգտագործմամբ համակողմանիորեն հետազոտել և վերլուծել վարչարարության համաչափության սկզբունքի տարրերը, ներկայացնել գիտագործնական կարևոր նշանակություն ունեցող եզրահանգումներ և առաջարկություններ:

Կարծում ենք, հետազոտության արժանիքներից է համաչափության սկզբունքի ուսումնասիրությանը նվիրված և հիմնականում վերջին տարիների ընթացքում հեղինակված եվրոպական հարուստ գրականության, ինչպես նաև հեղինակավոր միջազգային կառույցների փաստաթղթերի, այդ թվում՝ փորձագիտական եզրակացությունների, մեթոդական ձեռնարկների, ներպետական և արտասահմանյան երկրների մեծածավալ դատական պրակտիկայի համարժեք օգտագործումը: Ընդ որում, հեղինակը նշված աղբյուրների միջոցով ոչ միայն հիմնավորել է իր առաջարկություններն ու եզրահանգումները, այլ նաև կատարել է հետազոտության նպատակներից բխող համեմատական-իրավական ուսումնասիրություններ՝ մարդու իրավունքների սահմանափակումների համատեքստում համակողմանիորեն ներկայացնելով վարչարարության համաչափության սկզբունքի և դրա տարրերի բովանդակությունն ու բաղադրիչները, իրացման հիմնական առանձնահատկությունները:

Հեղինակի կողմից մշակվել են նաև վարչարարության համաչափության սկզբունքի պահանջների գնահատման հիմնական գիտագործնական չափանիշները, որոնք, կարևոր նշանակություն ունենալով այդ սկզբունքի հնարավորինս օբյեկտիվ, հետևողական և կանխատեսելի կիրառումն ապահովելու գործում, կարող են նպաստել նաև վարչական մարմինների գործունեության ընթացքում վարչարարության հիմնավորվածության մշակույթի ձևավորմանը:

Կարծում ենք, հեղինակին հաջողվել է դրսևորել նյութի հետազոտության անհրաժեշտ մեթոդաբանության ընտրության ինքնուրույնություն, ինչպես նաև եզրահանգումների և առաջարկությունների բավարար չափով ինքնատիպություն: Պաշտպանության ներկայացված եզրահանգումները հիմնականում համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, միաժամանակ, դրանց շարադրանքի վերաբերյալ մեր նկատառումները ներկայացված են ստորև:

Ատենախոսության ձևավորումը, կառուցվածքը և ծավալը համապատասխանում են սահմանված պահանջներին, մասնավորապես դա հնարավորություն է տվել համարժեք անդրադառնալու հեղինակի կողմից ընտրված հիմնական խնդիրներին:

Միաժամանակ, կարծում ենք, որ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնց վերաբերյալ մեր նկատառումները ներկայացված են ստորև.

1. Ատենախոսության ուսումնասիրության, մասնավորապես համաչափության սկզբունքի բաղադիչների ընտրության շրջանակը բավականին լայն է, ինչով պայմանավորված աշխատանքում ներկայացված եզրահանգումներն ու առաջարկությունները ոչ միայն անհարկի մեծաքանակ են, այլև դրանք որոշ դեպքերում անհրաժեշտ չափով միմյանցից տարանջատված չեն: Նկատի ունենալով, որ ընտրված հարցերի մի մասի վերաբերյալ հեղինակը մեծամասամբ համամիտ է եղել իրավաբանական գրականությունում արտահայտված դիրքորոշումներին և միայն ոչ էական տեսանկյունից է ներկայացրել իր եզրահանգումները, կարծում ենք աշխատանքն ավելի շահեկան կլիներ, եթե հեղինակը կենտրոնանար առավել առանցքային և հրատապ լուծում պահանջող խնդիրների վրա: Դա հնարավորություն կտար նաև նույն այդ խնդիրները հետազոտել ավելի լայն ասպեկտներով և երաշխավորել հետազոտության ընդունելի խորություն:

Այսպիսով, նշված հիմնավորման տեսանկյունից հետազոտության առարկան կարող էր հիմնահարցերի ավելի նեղ շրջանակ ընդգրկել, իսկ հետազոտության արդյունքները կարող էին վերախմբավորվել՝ ներկայացնելով համեմատաբար սակավ,

բայց ավելի համակողմանի պատճառաբանված և հիմնավորված եզրահանգումներ և առաջարկություններ:

2. Ընդհանուր առմամբ, նաև որոշ եզրահանգումների շարադրանքն է խնդրահարույց, քանի որ դրանց մի որոշ մասում մասնակի անդրադարձ է արված միևնույն խնդրին, ինչը ենթադրում էր, որ դրանց խմբավորումը ավելի կբարձրացներ եզրահանգումների գիտականությունը: Մի խոսքով, հեղինակը, թերևս, տարվել է մեծաքանակ եզրահանգումներ ներկայացնելու գրավչությամբ, ինչի արդյունքում դրանց մի մասը չի առանձնանում անհրաժեշտ խորությամբ ու ընդգրկվածության աստիճանով:

3. Ատենախոսության 3-րդ գլխի «Սահմանադրական իրավունքների սահմանափակման համաչափությունը կառավարման հատուկ ռեժիմի պայմաններում» վերտառությամբ 1-ին պարագրաֆում հեղինակը հիմնականում անդրադարձել է հատուկ իրավական ռեժիմների պայմաններում համաչափության սկզբունքի կիրառման չափանիշներին: Մինչդեռ, աշխատանքն ավելի կշահեր, եթե անդրադարձ արվեր նաև այդ ռեժիմների պայմաններում վարչարարության համաչափության սկզբունքի կիրառման առանձնահատկություններին, քանի որ այդ ռեժիմների դեպքում սահմանափակումներ կիրառելու անհրաժեշտությունը, որպես կանոն, ավելի ընդգծված է:

4. Գիտական թեզը հիմնական գծերով համապատասխանում է ձևավորման պահանջներին, նյութի շարադրանքը ևս հաջողված է, մասնավորապես չկան խրթին ու անորոշ մտքեր ու ձևակերպումներ: Միաժամանակ, նկատելի է, որ առանձին դեպքերում հեղինակին չի հաջողվել ապահովել մի մտքից մեկ այլ մտքի անցնելու ներքին տրամաբանությունը, մեր կարծիքով այդ անցումները երբեմն ստացվել են անչափ կտրուկ, չի պահպանվել ներքին անհրաժեշտ տրամաբանությունը:

Ատենախոսության հիմնադրույթներին նվիրված հեղինակի մենագրությունը և հոդվածները բացառապես տպագրված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված գիտական

48

հանդեսներում ու ժողովածուներում, որոնք համարժեքորեն են արտացոլում պաշտպանության ներկայացվող եզրահանգումները:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ նկատառումները, կարծում ենք, որ դրանք չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը, հեղինակը կատարել է ծավալուն ու արդյունավետ աշխատանք, ըստ այդմ էլ՝ Քրիստինե Սարգսի Ալեքսանյանի «Վարչարարության համաչափությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, և ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ 001 մասնագիտական խորհրդի անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՆՈՐԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

Ն. Այվազյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿՅԱՆ

«5» դեկտեմբերի 2022 թ.